ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԲԱՆԳԿՈԿԱԲՆԱԿ ԲԱՐԵՐԱՐ ԲՈԲ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻՐԱՐ ԲՈԲ ԳԵՒՈՐԳԵԱՆ, ՈՐ Ի ԲԱՆԳԿՈԿ, ԹԱՒԼԱՆԴ

Սիրելի պրն Գեւորգեան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնը, սէրն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ հոգու առանձնակի բերկրանքով անդրադառնում մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութիւններին:

Տիրոջ կամքով ուրախ առիթ ենք ունեցել անձնապէս ճանաչելու Ձեզ եւ հաղորդ դառնալու բազում տարիների Ձեր եկեղեցանպաստ արգասաւոր գործունէութեանը, որի բարձր գնահատանքով երջանկայիշատակ Մեր նախորդ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրենասէր ու եկեղեցասէր բարեգործ հայորդուդ կուրծքը զարդարեց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պատուոյ բարձրագոյն՝ «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով:

Արդարեւ, աստուածահաճոյ Ձեր գործերը բարի անուն ու ճանաչում են բերում Ձեզ ինչպէս Սփիւռքում, այնպէս եւ Մայր Հայրենիքում: Մեր հոգին ուրախ է, որ Դուք տարիներ շարունակ հետամուտ էք Մայր Եկեղեցու Տիրաւանդ առաքելութեան արդիւնաւոր իրականացմանը, ինչպէս նաեւ ամենայն սիրով ներդնում էք Ձեր ջանքերը ի խնդիր անկախ մեր Հայրենիքի զօրացման ու առաջընթացի՝ որպէս Թաիլանդում մեր երկրի պատուոյ հիւպատոս:

Ձեր նախանձախնդրութեան շնորհիւ Սինգապուրում նոր կեանք ստացաւ ու բարեզարդուեց հաւատոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի անունը կրող եկեղեցին, որի լուսաւոր ու խնկաբոյր յարկի ներքոյ բարեպաշտ հայորդիները պիտի շարունակեն փառաբանել Բարձրեալն Աստծուն եւ արժանանալ Նրա օրհնութեանը՝ բարեմաղթանքով եւ երախտագէտ հոգով յիշելով նաեւ պատուարժան հայորդուդ:

Որդիական սիրով ու նուիրումով Դուք Ձեր մասնակցութիւնը բերեցիք նաեւ Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեակի տօնակատարութիւնների պսակը հանդիսացող Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցու կառուցման օրհնեալ գործին՝ յանձն առնելով շքեղակառոյց աղօթատան Սուրբ Աշխէն մատուռի բարերարութիւնը: Գոհութիւն Աստուծոյ, որ քրիստոսասէր մեր ժողովրդին պարգեւել է Ձեզ պէս նուիրեալ արժանի զաւակ, ում անսակարկ ծառայութիւնը եւ անսուազ սէրը հանդէպ Մայր Եկեղեցին ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը արդիւնաւորուած է բազում բարի պտուղներով:

Սիրելի պրն Գեւորգեան, համազգային նուիրական մեր սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր բարեմաղթանքները եւ Ձեր ծառայութեանց ու վաստակի ամենաբարձր գնահատանքով Հայրապետական Օրհնութեան այսու Գրով շնորհում Ձեզ

1700-ԱՄԵԱԿԻ

պատուոյ շքանշան:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Աստծուց, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ առաջնորդելով բարի ու հայրենանուէր նորանոր իրագործումների:

Թող Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ բիւր բարիքների եւ առատ ողորմութեան:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 14-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 308